ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

27 մարտ, 2024 թվականի № 23-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործող կանոնադրությամբ, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը, ինչպես նաև Ընկերության գործադիր տնօրենի կողմից 2024 թվականի մարտի 26-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված Ն-ՀՄ-02/214/24 գրությունը և հաշվի առնելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում հանրային հեռարձակողի տեսալսողական հաղորդումների հեռարձակման կարևորությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից Ամերկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգում հիմնադրել «Առաջին ալիք Ամերիկա» քորփորեյշն դուստր ընկերություն՝ Սի Քորփորեյշն (C Corporation) կազմակերպաիրավական ձևով:

2. Սահմանել, որ «Առաջին ալիք Ամերիկա» քորփորեյշն դուստր ընկերության ստեղծման հիմնադիր ժողովին և այլ ժողովներին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության անունից մասնակցելու և համապատասխան որոշումներ կայացնելու լիազորությունը պատկանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 մարտ, 2024 թվականի

ք. Երևան